Արձանագրություն 5

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-24/1» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.11.2024թ. ժամը 15:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ս. Շահնազարյան – ՖՆ գնումների քաղաքականության վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ

Ե. Աղաջանյան – ՖՆ գնումների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Ն. Մաթևոսյան - ՖՆ գնումների քաղաքականության վարչության գլխավոր մեթոդաբան

Ն. Մուրադյան - ՖՆ գնումների քաղաքականության վարչության ավագ մասնագետ

Ս. Պատուրյան - «Ջի Սոլուշնս» ՊՈԱԿ-ի խորհրդական

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

1. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>**

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ՝

1. «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1) Հայտով առաջադրված մասնագետներ Դավիթ Գևորգյանի և Խաչիկ Մկրտչյանի մասով ներկայացված են ինքնակենսագրության և դրանում ներկայացված տեղեկատվության համապատասխանության մասին միայն մեկ գործատուի կողմից ներկայացված հաստատումների պատճենները՝ առնվազն երկուսի փոխարեն:

2) Մասնակցի կողմից ներկայացված տեղեկանքը՝ որպես գործատուի կողմից ներկայացված հաստատում մի շարք մասնագետների մասով, հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. «Վեբստարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ մասնակիցը չի ներկայացրել հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետով պահանջված հայտի ապահովումը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի

ձևով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտում առկա մյուս փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու վերաբերյալ գնահատում չի իրականացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «Թիմ Սոյյուշնս» ՓԲԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետը՝ «Վեբստարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի դեկտեմբերի 2-ին ժամը 15:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Շահնազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ե. Աղաջանյան

_____ Ն. Մաթևոսյան

_____ Ն. Մուրադյան

_____ Ս. Պատուրյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան